



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ԹԻՎ 1 ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ

ՈՐՈՇՈՒՄԸ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

23 հուլիսի 2014թ.

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի
թիվ 1 դատական կազմը՝

Նախագահությամբ՝ Ռ. Նազարյանի
Անդամակցությամբ՝ Վ. Ռովհաննիսյանի
Ա. Պետրոսյանի

Ուսումնասիրելով քաղ. Արա Սարգսյանի անհապական դիմումով գործը
քննության ընդունելու մասին հարցը,

ՊԱՐԵՅ.

Համաձայն ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կեփի՝ քաղաքացի Արա Սարգսյանը դիմել է ՀՀ սահմանադրական դատարան՝ խնդրելով «նախկին ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կեփը», գործող նույնանուն օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կեփը, 154-րդ հոդվածի 4-րդ մասը, ինչպես նաև 158-րդ հոդվածի 5-րդ մասը ճանաչել ՀՀ Սահմանադրության 18-րդ, 19-րդ, 20-րդ և 42-րդ հոդվածներին հակասող և անվավեր:

1. Դիմողը գիտնում է, որ վիճարկվող դրույթները սահմանափակում են իր, որպես պարագանորդի, դատավարական մի շարք իրավունքները, ինչպես նաև «ՀՀ վճռաբեկ դատարանին բողոքարկման ենթակա ակտերը բացառապես փաստաբանի միջոցով ներկայացնելու օրենսդրական արգելքի պայմաններում» սահմանափակում՝ դատարանի մակչելիության իր սահմանադրական իրավունքի իրացումը:

2. Ելնելով դիմումի և կից փաստաթղթերի ուսումնասիրությունից և դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ և 69-րդ հոդվածների պահանջներով, դադարական կազմը գրնում է, որ վերոհիշյալ դիմումով գործի քննությունը՝ ՀՀ վարչական դադարարության նախկին օրենսգրքի (ընդունված՝ 2007թ. նոյեմբերի 28-ին) 71-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, ՀՀ վարչական դադարարության գործող օրենսգրքի (ընդունված՝ 2013թ. դեկտեմբերի 5-ին) 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, 158-րդ հոդվածի 5-րդ մասի սահմանադրականության վերաբերյալ, ենթակա է մերժման հետևյալ պարձառարանությամբ.

- դիմողը, վիճարկելով հիշյալ դրույթների սահմանադրականությունը, չի ներկայացրել պարզած իրավական հիմնավորումներ դրանց հակասահմանադրականության վերաբերյալ: «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասը՝ որպես անհարական դիմումի ընդունելիության պայման, սահմանում է, որ դիմումը պետք է պարունակի ՀՀ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ: Այս համարեքափում ՀՀ սահմանադրական դադարանն իր ՍԴՈ-839 որոշման մեջ դիրքորոշում է հայտնել այն մասին, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 4-րդ մասն ամրագրում է վիճարկվող դրույթի՝ Սահմանադրությանը հակասելու հիմնավորումներ ներկայացնելու՝ դիմողին ներկայացվող պահանջը, համաձայն որի՝ վիճարկվող օրենքի դրույթի հակասահմանադրականությունը պետք է հիմնավորված լինի օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասում նշված որևէ հարկանիշով: Դիմումի ուսումնասիրությունը վկայում է, որ վերոհիշյալ իրավադրույթների վերաբերյալ առկա չէ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 68-րդ հոդվածի 7-րդ մասով պայմանավորված ենթադրյալ հակասահմանադրականության որևէ հիմնավորում,

- դիմողը նաև չի հիմնավորել, թե վիճարկվող վերոհիշյալ նորմերի «հակասահմանադրականության» արդյունքում իր սահմանադրական որ իրավունքն է խախտվել, ինչպես նաև չի հիմնավորել իր սահմանադրական իրավունքների ենթադրյալ խախտման փաստի և վիճարկվող դրույթների հակասահմանադրականության միջև պարձառահետքնանքային կապի առկայությունը, ինչը, ըստ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 7-րդ մասի և սահմանադրական դադարանի՝ ՍԴՈ-839 որոշման մեջ արդարադարձական պարագաների համար համապատասխան դիրքորոշման, անհարական դիմումն ակնհայտ անհիմն համարելու հիմք է,

- բացի դրանից, դադարականության արդյունքում դիմողի հանդեպ առաջացած անբարենպաստ հետեւանքներն ընդամենը նրա նկարմամբ կայացված համապատասխան դադա-

կան ակդերի արդյունք են, այսինքն՝ խնդրո առարկա դրույթների սահմանադրականությունը վիճարկելով՝ դիմողն ընդամենը բարձրացնում է դրանց կիրառման իրավաչափության հարց՝ ներկայացնելով այն հակասահմանադրականության վիճարկման շրջանակներում՝ ըստ էության բարձրացնելով այդ դրույթների կիրառման իրավաչափության հարց:

Առաջնորդվելով ՀՀ սահմանադրական դադարանի՝ 2009 թվականի մարտի 17-ի ՍԴԱԸ-21 որոշման մեջ արդահայտած իրավական դիրքորոշմամբ, ըստ որի՝ բոլոր այն դեպքերում, երբ դիմողը, ձևականորեն վիճարկելով օրենքի դրույթի սահմանադրականության հարցը, ըստ էության բարձրացնում է այդ դրույթի կիրառման իրավաչափության հարց, ապա այդպիսի դիմումները ենթակա են մերժման՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32 հոդվածի 1-ին կետի հիմքով՝ որպես սահմանադրական դադարանի քննության ենթակա հարց չառաջադրող դիմումներ, դադարական կազմը գրնում է, որ դրվագ դեպքում առկա է դիմումի՝ վերոհիշյալ նորմերի սահմանադրականության քննության մասով ընդունումը մերժելու՝ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին կետով նախադեսված հիմք:

Դադարական կազմը նաեւ արձանագրում է, որ ինչպես վկայում է դիմումին կից փաստաթղթերի ուսումնասիրությունը, ՀՀ վարչական դադարավորության օրենսգրքի 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի դրույթը դիմողի նկարմամբ չի կիրառվել, որպիսի հանգամանքը ՀՀ Սահմանադրության 101-րդ հոդվածի 6-րդ մասի, «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 69-րդ հոդվածի 1-ին մասի նորմադրիվ պահանջներին համապատասխան դիմումի քննության ընդունումը մերժելու հիմք է, քանի որ ՀՀ սահմանադրական դադարան դիմում կարող է ներկայացնել ֆիզիկական կամ իրավաբանական այն անձը, որի նկարմամբ ընդհանուր իրավասության կամ մասնագիտացված դադարանի՝ գործը լուծող վերջնական ակդում կիրառվել է վիճարկվող նորմը:

3. Դադարական կազմը միաժամանակ գրնում է, որ ՀՀ վարչական դադարավորության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի սահմանադրականության վիճարկման մասով առկա են դիմումը քննության ընդունելու հիմքեր, քանի որ.

- դիմումում առաջադրված հիշյալ հարցը ենթակա է սահմանադրական դադարանին,
- դիմողն այդ հարցով իրավասու է դիմել սահմանադրական դադարան,
- դիմումում առաջադրված հարցի վերաբերյալ առկա չէ ՀՀ սահմանադրական դադարանի որոշում, ինչպես նաեւ այլ դիմումի հիման վրա նույնաբովանդակ հարցով սահմանադրական դադարանում գործի դադարքննություն չի իրականացվում,

- դիմողն այդ հարցով սպառել է դադարական պաշտպանության բոլոր միջոցները:

4. Դիմողը նաև միջնորդություն է ներկայացրել իրեն պետական գուրքի վճարումից ազարելու վերաբերյալ: Սահմանադրական դադարանի դադարական կազմը գիտում է, որ «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 27-րդ հոդվածի, ինչպես նաև «Պետական գուրքի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի նորմատիվ կարգավորումների շրջանակներում առկա է դիմողին պետական գուրքի վճարումից ազարելու հիմք:

Ենելով վերոշարադրյալից և դեկավարվելով «Սահմանադրական դադարանի մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածի 1-ին, 6-րդ կետերով և 69-րդ հոդվածի 7-րդ մասով՝ ՀՀ սահմանադրական դադարանի թիվ 1 դադարական կազմը

ՈՐՈՇԵՑ.

1. Քաղաքացի Արա Սարգսյանի անհադական դիմումով գործը՝ ՀՀ վարչական դադարարության օրենսգրքի 154-րդ հոդվածի 4-րդ մասի մասով ընդունել քննության:
2. Քաղաքացի Արա Սարգսյանին ազարել պետական գուրքի վճարումից:
3. Սույն գործով դադարարությանը որպես պարասխանող կողմ ներգրավել ՀՀ Ազգային ժողովին:

Նախագահող՝

Անդամներ՝

23 հուլիսի 2014 թվականի
ՍԴԴԿՈ/1-11